



Անիի' Հայաստանի պատմական մայրաքաղաքներից մեկի, ավերակներն այժմ վերածվել են Թուրքիայի զբոսաշրջության կենտրոնի. 6 ամսվա ընթացքում 21.000 զբոսաշրջիկ է գրանցվել:

Թեև՝ այսօր թուրքական կառավարությունը պաշտոնապես վերակառուցողական աշխատանքներ է իրականացնում Անիում, քաղաքը չի դադարել լինել տարբեր երկրների հետաքրքրության կենտրոնում: «Անցյալ տարի Անի՝ քաղաքակրթական քաղաք են այցելել 23.730, իսկ ահա այս տարի, ընդհամենը վեց ամսվա մեջ, 21.000 զբոսաշրջիկ: Այս հինավուրց քաղաք այցելող բնիկ և օտարերկրյա զբոսաշրջիկների մեծ աճ է գրանցվել: Զբոսաշրջիկները հիմնականում Գերմանիայից, Հայաստանից, Թուրքիայից և Ճապոնիայից են», - ասաց մշակույթի եւ զբոսաշրջության մարզային վարչության տնօրեն Հաբան Դողանայը: Նա նշեց նաև, որ Անին արժանի է Համաշխարհային ժառանգություն կոչմանը վայել տեսարժան վայրերի ցուցակում ընդգրկվելու համար, իսկ ահա քաղաքի պահպանության համար պատասխանատու են միայն ներկա և ապագա սերունդները:



